



## Գ Ա Ր Ո Ւ Ն

Հազար ձեռով, հազար լեզուով կը կարկաչէ կեանքը նորէն,  
Զըմեռէն վերջ ահաւասիկ կ'երգէ արեւն «հրաւափառ»,  
Ու կը ծրծեն երազ ու Սէր մարդ ու մըրջիւն ծաղիկ ու ծառ,  
Կը հարսնանայ երկիրն դարձեալ, կը խըլըրտի ընդերքներէն:

Անյագօրէն կ'ըմպէ հիմա հողը շողերը արեւուն,  
Պիտի ըլլան գինի ու հաց ու երգ ու իղծ ու բոյր ու բոյր,  
Դաւոս ու հովիտ, լեռ ու անտառ պիտի փոխեն հազար հրապոյր,  
Կ'երգէ արդէն սիւսն իր սքրինգն սիրահոյս հոգիներուն:

Հոն քիւրն սակ զոյգ մը քրոջուն ահաւասիկ կը շինեն բոյն,  
Ու նոր կեանքեր հոն, նոր շունչով պիտի կըրկնեն տաղերը հին,  
Ընկերակցի պիտի անոնց առաւօտեան վիճը հովին,  
Նոր կ'առօտի ու նոր խանդով պիտի ողջունուի փառքն արեւուն:

Դուն կ'ունկընդրե՞ս, կը ձայնակցի՞ս այս համերգին հազարաձայն,  
Կը մասնակցին որուն ամեն ինչ, հիւլէէն մինչեւ աստղեր,  
Տիեզերքի Ոգին է որ հարսանիքի կուտայ հրաւեր,  
Կոչունքի են մարդն ու մեղուն, ծիլն ու ծաղիկ, իրեն համայն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

